ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ավելի քան յոթանասուն տարվա խորհրդային ինտերնացիոնալիզմի «նյութեղ» քարոզից հետո, երբ 1985 թ. ապրիլից մեր երկրում սկիզբ դրվեց դեմոկրատիային և հրապարակայնությանը, անսպասելիորեն բացահայտվեց մի շատ տարօրինակ երևույթ: Պարզվեց, որ «ժողովուրդների բարեկամության և եղբայրության միջնաբերդում»` ԽՍՀՄ-ում, երբ իշխում է բռնությունն ու կամայականությունը, համատեղ ապրող տարբեր ազգերն ու ազգությունները կարող են դրսևորել սոցիալիստական ինտերնացիոնալիզմի «ցնցող օրինակներ»: Սակայն սոցիալ-քաղաքական շնչին իսկ ազատության պայմաններում, այդ նույն ազգերն ու ազգությունները ոչ միայն չեն կարողանում ապրել համատեղ, այլև նրանց միջև «հանկարծահաս» թշնամությունը ծավալվում է այն աստիճան, որ կողմերից մեկը զանգվածային ջարդերով ի լուր աշխարհի ազդարարում է բոլորովին «նոր բնույթի ու որակի» խորհրդային ինտերնացիոնալիզմի գոյության փաստի մասին: Այդ, այսպես կոչված, «ազգամիջյան փոխհարաբերությունների պարադոքսը», ինչպես հայտնի է, առավել ակնհայտ կերպով դրսևորվեց հատկապես դեմոկրատիայի ու հրապարակայնության պայմաններում առաջացած ազգային-ազատագրական շարժումների հետևանքով:

Հարց է ծագում, արդյո՞ք համապատասխանում է հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքներին ու օրինաչափություններին այն ռեալ իրողությունը, որ դեմոկրատիան կարող է «պատճառ» դառնալ ազգային-ազատագրական շարժումների երևան գալու համար: Առաջին հայացքից կարող է օրինաչափ թվալ, որ դեմոկրատիայի և ազգային-ազատագրական շարժումների միջև գոյություն ունի ուղղակի պատճառահետևանքային կապ:

Բայց, արդյո՞ք, իրականում, դա այդպես է:

Ինչպես հայտնի է, «դեմոկրատիա» հասկացությունը ծագել է հունական ԴԵՄՈՍ–ԺՈՂՈՎՈՒՐԴ և ԿՐԱՏՈՍ–ՈՒԺ, ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ բառերի կապակցումից, որը ամենակարճ իմաստով նշանակում է ժողովրդավարություն, ժողովրդի իշխանություն, այսինքն ժողովրդի կամքը բարձրացված է օրենքի աստիճանի: Բնական է, որ տարբեր դարաշրջաններում և այժմ էլ տարբեր երկրներում դեմոկրատիան իրագործվել և իրագործվում է յուրովի, տարբեր ձևերով ու եղանակներով, ինչպես, երբեմն էլ` էական աղավաղումներով, որոնք էլ չեն կարող բուն հասկացության բովանդակության մեջ առաջ չբերել արմատական փոփոխություններ: Համենայն դեպս, հասկացության «մեղքը» չէ, որ ձևախեղվում է նրա ռեալ բովանդակությունը: Այլ կերպ ասած, օրինակ, երբեք դեմոկրատական կառավարման ձևը չի կարելի շփոթել հասարակության կառավարման տոտալիտար ձևի հետ:

Ազգային-ազատագրական շարժումներ, որպես օրենք, առկա են այն երկրներում կամ ժողովուրդների մոտ, որոնք հակառակ իրենց կամքի, գտնվում են մի այլ երկրի պետական-տարածքային կազմում կամ էլ ճնշող երկրից տասնյակ, հարյուրավոր և, նույնիսկ, հազարավոր կիլոմետրեր հեռու, և մեծ կամ հզոր ազգի կողմից ենթարկվում են էթնիկական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, լեզվամշակութային, ֆիզիկական և այլ կարգի ճնշումների: Պատմությունից հայտնի է, որ գրեթե բոլոր բազմազգ և միևնույն վարչական կենտրոնից ղեկավարվող հսկայական պետությունները, ավելի ճիշտ, կայսրությունները, իրենց երկարատև կամ կարճատև գոյության ընթացքում կանգուն են եղել միայն ու միայն բռնության շնորհիվ: Իսկ նման կայսրությունների ճակատագիրը հայտնի է բոլորին: Ոչ թե պատահականությունների, այլ որոշակի օրինաչափությունների հետևանք է, որ այսօր աշխարհում գոյություն չունեն դասական իմաստով գաղութային կայսրություններ, ոչ էլ թվով շատ բազմազգ պետություններ (խոսքը պետական որոշ ինքնուրույնություն ունեցող և ֆեդերատիվ հիմունքներով կառավարվող կազմավորումների մասին է): Ինչո՞ւ: Որովհետև ազգերի կոնգլոմերատ հանդիսացող միասնական բազմազգ պետությունների գոյությունն ինքնին հետադիմական երևույթ է, հակաբնական, հակապատմական, հակաժողովրդավարական է, այլ խոսքով` անախրոնիզմ այսօրվա համաշխարհային քաղաքակրթության զարգացման գործընթացների մեջ: Իսկ այն երկրները, որոնք դեռևս կազմությամբ և կառուցվածքով բազմազգ են (Հարավսլավիա, ԽՍՀՄ և այլն), այժմ ապրում են քաղաքական, տնտեսական, սոցիալական և, որ ամենակարևորն է, էթնիկական խոր ու տևական ճգնաժամ:

Ինչպես վկայում է իրական դեմոկրատիայով հռչակված ժամանակակից քաղաքակիրթ երկրների հավաքական փորձը, այնտեղ, որտեղ հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում իշխում են հիմնականում ժողովրդավարական սկզբունքները և իրավական պետության օրենքները, բացակայում են ազգային-ազատագրական շարժումների օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալները:

Այդ դեպքում ինչո՞վ բացատրել դեմոկրատիայի և հրապարակայնության պայմաններում ԽՍՀՄ`-ում տեղի ունեցող ազգային-ազատագրական շարժումների լայն թափը, հիմնական իմաստն ու պատճառները:

1917 թվականի նոյեմբերյան մեծ հեղափոխության ԲԱՑԱՌԻԿՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ տարփողումն ու ծայրահեղ չարաշահումը շատ ծանր հետևանքներ ունեցավ ԽՍՀՄ-ի ազգամիջյան հարաբերությունների բնականոն զարգացման գործընթացների վրա: 1918 թվականին Ռուսաստանում սանձազերծված քաղաքացիական պատերազմի կարծես թե «տրամաբանական շարունակությունը» դարձավ բոլշևիկյան իշխանության կողմից ցարական Ռուսաստանի նվաճած գրեթե բոլոր ժողովուրդների «կամավոր» խորհրդայնացումը: Այնուհետև 1922 թվականի դեկտեմբերի 30-ին ՈՉ ԿԱՄԱՎՈՐ ԵՎ ՈՉ ԷԼ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ հիմունքներով ստեղծվեց ԽՍՀՄ-ը` «յուրովի» լուծելով սովետեն հանրապետությունների միավորման հարցը. «...որը, ԿԱՐԾԻՄ (ընդգծումը— Ս. Հ.) պաշտոնապես կոչվում է սովետական սոցիալիստական հանրապետությունների հարց» (Վ. Ի. Լենին, Երկ., հ. 45, էջ 420):

Աշխարհում «ԻՐ ՆՄԱՆԸ ՉՈՒՆԵՑՈՂ սոցիալիստական հեղափոխություն» կատարած, աշխարհում «ԵԶԱԿԻ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների եղբայրական Միությունում» մինչև 20-ական թվականների վերջը և 30-ական թվականների սկիզբը հիմք դրվեց խորհրդային ինտերնացիոնալիզմի ստալինյան փուլին: Հենց այդ տարիներին սկիզբ առավ (և մինչև օրս շարունակվում է) խորհրդային երկրի «եզակիության» տխրահռչակ առասպելը, որի պաշտոնական անվերջ գովերգման արդյունքը եղավ այն, որ, մի կողմից աստիճանաբար երկրում ուժեղացավ «ժողովուրդների հոր»` Ստալինի, անձի պաշտամունքը, մյուս կողմից ԽՍՀՄ-ը քաղաքակիրթ պետություններից տարանջատվեց և հայտնվեց մեկուսացման մեջ: Ի դեպ, միանգամայն բնական էր դեպքերի ու իրադարձությունների զարգացման նման ընթացքն ու ավարտը, աշխարհի եզակի ինտերնացիոնալիզմով հռչակված բազմազգ երկիրը պետք է, որ ստեղծեր «եղբայրացած երջանիկ ժողովուրդների» եզակի «հայր» անձի պաշտամունքը: Նշված հանգամանքն էլ նպաստեց, որ Ստալինը «սոցիալիզմ կառուցեց» տասնյակ միլիոնավոր անմեղ մարդկանց արյունով, մի քանի տասնյակ ազգությունների բռնի ձուլման ու ոչնչացման միջոցով: Չէ՞ որ, ըստ սոցիալիզմի «մեծագույն ստրատեգի»` «ամենաթանկ կապիտալը մարդն էր», իսկ ազգերի «եղբայրությունն ու բարեկամությունը»` սոցիալիզմի մեծագույն նվաճումը:

Սոցիալիզմի կառուցման երրորդ, համեմատաբար երկրորդ մեծ փուլում (երբ հաջորդեց խրուշչովյան կիսատ-պռատ դեմոկրատացման կարճատև շրջանին), ստալինյան ռազմական դիկտատուրային փոխարինելու եկավ բրեժնև-սուսլովյան կաշառակերության դիկտատուրան: Բրեժնևյան ժամանակաշրջանը, որը առավելապես աչքի է ընկնում, այսպես ասած, «խաղաղ բռնություններով», բռնաբարված ու լլկված «դեմոկրատիայով» և կուսակցության կողմից ծրագրված արդեն «եղբայրացած» ազգերին ու ազգություններին ձուլելու հնարավոր քաղաքական միջոցներով, քիչ ավերածություններ չգործեց երկրում, քան, ասենք, ոչ հեռու անցյալում Ստալինը: Ուստի քանի որ մեր երկրում ազգային հարցը «վաղուց» լուծված էր, մնում էր քաղաքական հուժկու մի հարվածով ձուլել բոլոր ազգերին ու ազգություններին: Չէ՞ որ կյանքն է ապացուցում, որ միատարր երկրում համեմատաբար հեշտ է կառավարելը: Ինքնին հասկանալի է, որ նման պայմաններում ազգամիջյան հարաբերություններին առնչվող որևէ հարցի լուծման մասին խոսք լինել չէր կարող:

Սակայն, ինչպես ասում են, աստված չէր մոռացել նաև իր խորհրդային զավակներին: Եկավ բաղձալի օրը: 1985 թ. ապրիլյան պլենումում ԽՄԿԿ-ն ի լուր աշխարհի հայտարարեց, որ մեր երկրում սկիզբ է դրվում դեմոկրատիային ու հրապարակայնությանը: Փաստորեն անցել են արդեն չորս երկար ու ձիգ տարիներ, բայց խորհրդային ժողովուրդը, բացառությամբ մի քանի քաղաքական, տնտեսական երկչոտ քայլերից, այդպես էլ վերակառուցման կուրսի, մասնավորապես, դեմոկրատիայի, այսպես ասած, «ամբողջական և իսկական դեմքը» դեռ չի տեսել: Ինչո՞ւ: Պատասխանը ընդհանուր է և միանշանակ. բոլոր հեղափոխությունների ժամանակ անցումային շրջանի դժվարությունները մերթ ընդ մերթ ուղեկցվում են նաև ճգնաժամերով: Այլ կերպ ասած, հինը դեռ ուժեղ է և մեծ համառությամբ դիմադրում է` չզիջելով սեփական դիրքերը, իսկ նորը դեռ չի հասցրել ամրապնդել իր դիրքերը: Այսպիսի բացատրությունը, համաձայն, այսպես կոչված, «անցումային դիալեկտիկայի», ընդհանուր առմամբ ճիշտ է: Սակայն որոշ ոլորտներում արմատական փոփոխություններ պահանջող հասարակության համար սկզբունքորեն չեն կարող բավարարել կիսատ-պռատ, թերություններով, երբեմն էլ` լուրջ թերություններով տառապող ռեֆորմները, առավել ևս, երբ դրանք իրականացվում են ընդգծված անփութությամբ ու անհետևողականությամբ: Այսպես, օրինակ, ազգամիջյան հարաբերությունների պրոբլեմը ցանկացած ֆեդերատիվ քաղաքական կառուցվածք ունեցող բազմազգ երկրի համար բախտորոշ նշանակություն ունի, որը, բնականաբար, արմատական լուծում է պահանջում առաջին հերթին: Բայց քանի որ մեր պետության սկզբնավորման առաջին տարիներից սկսած, դասակարգային շահեր և սոցիալ-տնտեսական հարցերի լուծումը բացահայտորեն գերադասվել են ազգային շահերից, հետևաբար ազգամիջյան բոլոր կարգի պրոբլեմները միշտ էլ, որպես կանոն, երկրորդ, երրորդ պլան են մղվել: Այս հանգամանքն էլ վկայում է միութենական իշխանությունների աներկրա արհամարհանքը երկրում ապրող և բոլոր տեսակի դժվարությունները միահամուռ հաղթահարող մյուս ազգերի, մասնավորապես, փոքրաքանակ ազգերի ու ազգությունների նկատմամբ: Վերցնենք ԽՄԿԿ-ի ցանկացած համագումարի նյութեր կամ էլ երկրի ընդհանուր պրոբլեմներին նվիրված պլենումների որոշումների նախագծեր և կհամոզվենք այդ բանում: Նույնիսկ հիմա, երբ երկիրը կանգնած է ազգամիջյան պատերազմների շեմին, դարձյալ շարունակվում է նույն վերաբերմունքը ազգային հարցի նկատմամբ` չնայած ամեն կարգի խոստումների, «մտահոգությունների», «նախագծերի», «ծրագրերի», «փրկիչ դեղատոմսերի» առատությանը:

Ազգամիջյան հարաբերությունների համակարգում տասնամյակներով կուտակված պրոբլեմները, որոնք շոշափում են փոքրաքանակ ազգերի ամենանվիրական ու սուրբ զգացմունքները` ազգային արժանապատվության և ինքնասիրության զգացմունքներ, միութենական իշխանությունների կողմից դրսևորվող անհաջող խուսանավումներ, բացահայտ արհամարհանքը և չկամությունը այդ պրոբլեմները լուծելու ուղղությամբ, հավատի կորուստը պատմական և սոցիալական անարդարությունների շտկման նկատմամբ, դեմոկրատիայի ընձեռած որոշ քաղաքական ազատությունը անհրաժեշտաբար ժողովրդական լայն զանգվածներին ոտքի է հանել ազգային-ազատագրական պայքարի: Ընդհանուր առմամբ այսպիսին են դեմոկրատիայի և ինտերնացիոնալիզմի «քաղաքական կողմի» խորհրդային ըմբռնման յուրահատկությունները» ԽՍՀՄ-ում:

Դեմոկրատիայի, հրապարակայնության և ինտերնացիոնալիզմի մի յուրօրինակ փորձաքար հանդիսացավ արցախյան ազգային-ազատագրական շարժումը:

Արցախյան հայոց համազգային շարժման փորձը վկայում է, որ ԽՍՀՄ-ում հռչակված դեմոկրատիան և հրապարակայնությունն ազգային պրոբլեմներ լուծելիս դեռևս չեն ծառայում այն նպատակին, ինչի համար կյանքի են կոչված, այսինքն` և՛ պատմական արդարության, և՛ սոցիալական արդարության, և՛ օբյեկտիվ ճշմարտության վերականգնմանը:

Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ խորհրդային երկրում գոյություն ունի երկու բնույթի ճշմարտություն, մեկը` «վերևների», մյուսը` «ներքևների» համար: Իսկ համաշխարհային քաղաքակրթության պրակտիկան ապացուցում է հակառակը, որ ճշմարտությունը եղել և մնում է մեկը` կոնկրետը, այն է` իր բնույթով ճշմարտությունը օբյեկտիվ է, և նրա բովանդակությանը անպայման համարժեք պետք է լինի ռեալ իրականությանը:

ԽՍՀՄ-ում տեղի ունեցող ազգային-ազատագրական շարժումները, մասնավորապես, արցախյան շարժումը, անուղղակի կերպով ցույց տվեցին, որ քաղաքական կոնյունկտուրայի համար «մեթոդաբանական» նշանակություն ունի ճշմարտության «դասակարգային» սուբորդինացիայի սկզբունքի համաձայն: Օրինակ, միևնույն ճշմարտությունը կարող է տարբեր լինել, ասենք, Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Մերձբալթյան հանրապետություններում, Միջինասիական հանրապետություններում, ՌՍՖՍՀ-ում և այլն: Իսկ արդյունքում միութենական իշխանությունների կողմից «դասակարգվող» ճշմարտությունների անդրադարձումը իրական կյանքում, երկրի տարբեր ռեգիոններում թշնամանք է սերմանում տարբեր ազգերի միջև, մի խոսքով, ավերածություններ է գործում: (Թեև, հիշենք անցյալ տարվա ընթացքում կենտրոնական հեռուստատեսության և կենտրոնական մամուլի սանձազերծած ընդգծված հակահայկական նողկալի, քարոզարշավը և դրա արձագանքները երկրի տարբեր մասերում): Կամ, երբ Արցախում և Հայաստանում գործադուլներ էին տեղի ունենում մեզ բոլորիս հայտնի պատճառներով, ամբողջ երկիրը (բանվորից սկսած վերջացրած մինիստրը) հայ ժողովրդին «դատափետում» էր, բողոքում, խրատում, քարոզ կարդում մեր գլխին, պնդելով, որ դա «շատ վատ բան է», մինչև իսկ որակելով հակախորհրդային գործողություններ: Սակայն, հետագայում պարզվեց, որ գործադուլները լինում են երկու բնույթի` դրական և բացասական: Երբ հայերն են գործադուլ անում, դրանք բացասական բնույթի հակապետական, հակախորհրդային գործադուլներ են: Բայց երբ գործադուլներ են տեղի ունենում, ասենք, Կուզբասում, Դոնբասում և այլուր, դրանք դրական բնույթի գործադուլներ են: Երկրի ղեկավար Մ. Ս. Գորբաչովը ածխահատների գործադուլը գնահատեց իբրև դրական երևույթ և, միաժամանակ, ողջունում էր «բանվոր դասակարգի ակտիվությունը, որը որոշ չափով իր նպաստն է բերում վերակառուցմանը»: Նույնիսկ սումգայիթյան ցեղասպանության և հայ ժողովրդի խաղաղ միտինգների միջև կենտրոնում ոչ մի տարբերություն չտեսան և մեր «մեղքը» մինչև հիմա էլ ավելի մեծ է, քան հարևան ժողովրդինը: Ստալինի օրոք կատարված ժողովուրդների զանգվածային տեղահանումների և ադրբեջանցիների կողմից հայերի նկատմամբ ձեռնարկած զանգվածային բռնագաղթի միջև, պարզվում է, վիթխարի «տարբերություն» կա, անցյալինը անողոք դատապարտվում է, իսկ ներկայինը` մեծ խնամքով թաքցվում: Կամ` Արցախի պրոբլեմի էությունը ճիշտ հասկանալու, օբյեկտիվ ինֆորմացիա «վերևներին» ներկայացնելու համար ԼՂԻՄ մեկնող բոլոր հանձնաժողովները նախապես արդեն ունենում են «որոշակի կարծիք» պրոբլեմի վերաբերյալ: Այսպիսի օրինակները բավականաչափ շատ են:

Վերը բերված փաստերը մի ավելորդ անգամ գալիս են հաստատելու այն իրողությունը, որ խորհրդային Միությունում շատ հաճախ իրականացվող, այսպես կոչված, «միակողմանի» ինտերնացիոնալիզմի քաղաքականությունը ինքնին բացասում է ժողովուրդների բարեկամության վեհ գաղափարը: Որքան մեզ հայտնի է, ո՛չ Մարքսի, ո՛չ Էնգելսի և ո՛չ Լենինի աշխատություններում ոչ մի տեղ գրված չէ, որ ինտերնացիոնալիզմը նաև նշանակում է շովինիզմ կամ խտրականություն կամ այնպիսի քաղաքականության իրականացում, որի հետևանքը լինի ազգերի թշնամությունը և այլն, և այլն:

Ինչպես տեսնում ենք, Խորհրդային Միության «խիստ ինքնատիպ» երկիր լինելու «կոմպլեքսը» նրան հասցնում է մոլորության այն աստիճանին, որ ինտերնացիոնալիզմի մարքսիստական ըմբռնումը նույնիսկ աղավաղում և կիրառում են «յուրովի»: «Վերևների» քաղաքական պատկերացումների «յուրահատկության» պատճառով դեմոկրատիան ներկայացվում է «ընդհանրապես դեմոկրատիա` որպես այդպիսին», որն իրականում գոյություն չունի: Դեմոկրատիան իր բնույթով ու դրսևորումներով կոնկրետ-առարկայական է: Պատահական չէ, երբ կոնկրետ դեմոկրատիայի ընձեռած հնարավորություններն առանձին մարդիկ, խմբերը կամ ազգերը փորձում են օգտագործել այս կամ այն պրոբլեմը արմատապես լուծելու համար, հնչում են «վերևների» սպառնալի հրահանգները, այն է` «Դուք դեմոկրատիան ճիշտ չեք հասկանում: Դեմոկրատիան ամենևին էլ չպետք է հասկանալ ամենաթողության իմաստով...», և այլն: Քաղաքական կոնյունկտուրայի ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ մասին «մենաշնորհային» պատկերացումը չի համընկնում ժողովրդի ըմբռնած ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ հետ: Որքան էլ դառը, անցանկալի լինի, համենայն դեպս պետք է ընդունել այն ճշմարտությունը, որ, այո՛, ազգային-ազատագրական շարժումները միայն կապիտալիզմի գաղութային տիրապետությունների հատուկ երևույթը չեն, այլ նաև այն երկրներում են հնարավոր այդպիսի շարժումներ, որտեղ բացակայում են իսկական ժողովրդավարությունը, իրավական պետության օրենքները, թեկուզ դա լինի սոցիալիստական ֆեդերատիվ պետություն:

Այսպիսին է իրականում եղել (և դեռևս այդպես էլ կա) ԽՍՀՄ-ում խորհրդային ինտերնացիոնալիզմի քաղաքական ըմբռնումը, որը անմիջական և միջնորդավորված բազմաթիվ միջոցներով ու ձևերով կապված է երկրում ծնունդ առած ազգային-ազատագրական շարժումների հիմնական պատճառների հետ: Ժողովրդավարական բոլոր սկզբունքները, իրավական պետության բոլոր օրենքները տրամագծորեն հակառակ են տոտալիտար քաղաքական կառուցվածք և հասարակական կազմակերպվածք ունեցող պետական բոլոր կազմավորումների գոյությանը` անկախ քաղաքական սիստեմների բնույթից: Հետևաբար, տոտալիտար երկրում դեմոկրատիան և ազգային-ազատագրական շարժումները հասարակության մեջ (ԽՍՀՄ-ում) հակադիր բևեռներում «կյանք» առնող և միմյանց բացառող երևույթներ են: Անհեթեթություն է մտածել, որ դեմոկրատիան «թշնամի» է դեմոկրատիային: Ուստի, դեմոկրատիան երբեք չի կարող դառնալ ազգային-ազատագրական շարժումների պատճառ: Դեմոկրատիան և դեմոկրատական կառավարման քաղաքական ձևը դարձել է քաղաքակիրթ մարդկության մեծագույն նվաճումը և ոչ մի երկիր, ոչ մի ժողովուրդ, մեծ կամ փոքր, իրավունք չունի այն օգտագործելու հակադեմոկրատական նպատակներով:

ՍԻՐԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ